

ՆՈՐԻՏԱՍԻ ՆԱԽԱԿՆԵՐԸ

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արվեստի վաստակավոր գործիչ

Բանասիրության և արվեստագիտության մեջ խոշոր նշանակություն է ստացել անվանի գրողների և արվեստագետների նամակագրությանը, հատկապես այն էջերին, որոնք հասցեագրված են մտերիմ ընկերներին ու բարեկամներին: Իրենց մտքերն ու ապրումները, խոհերն ու զղացմունքները հանձնելով թղթին, այդ արվեստագետները մեծապես օգնում են այն հեաագոտողներին, որոնք գբաղվում են այս կամ այն ստեղծագործողի ժառանգության ուսումնասիրությամբ: Այս է պատճառը, որ ժամանակակից արվեստագիտությունն այդքան մեծ ուշադրություն է դարձնում նշանավոր արվեստագետների նամակների հավաքման, մշակման, ուսումնասիրման ու հրատարակման գործին:

Այս ուղղությամբ Ռուսաստանում հսկայական գործ է կատարված: Հրատարակված են Գլինկայի, Չայկովսկու, Ռախմանինովի և այլոց նամակների ժողովածուները: Դժբախտաբար, մեզ մոտ Հայաստանում, այս ուղղությամբ դեռևս քիչ բան է արված: Թեև հայ արվեստագետների բազմաթիվ նամակներ են կենտրոնացված Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության դրականության և արվեստի թանգարանի երաժշտության բաժնի արխիվում, սակայն մինչև այժմ հրատարակված է միայն Ա. Սպենդիարյանի նամակների մեկհատորակը (կազմող՝ Ք. Գրիգորյան):

1952 և 1955 թթ. զգալի շափով համալրվեց Կոմիտասի արխիվը՝ շնորհիվ այն առաքումների, որ կատարվեց Փարիզի հանձնաժողովի և անձամբ օրիորդ Մարգարիտ Բաբայանի կողմից: 1957 թ. Փարիզից ստացվեցին նաև Կոմիտասի նամակների պատճենները, իսկ հայտնի բանաստեղծ-գրականագետ և քաղաքական գործիչ Արշակ Չոպանյանի հարուստ արխիվն ստանալուց հետո գտնվեցին Կոմիտասի գրած 27 նամակները ևս: Այսպիսով, վերջին տարիներին Կոմիտասի արխիվը հարստացավ 50-ից ավելի արժեքավոր նամակներով, որոնք մեծ նշանակություն ունեն հանճարեղ հայ կոմպոզիտորի կյանքի, ղործունեության և ստեղծագործության հետ կապված շատ կարևոր հարցեր լուսաբանելու գործում:

Անհնար է մի հողվածում ընդգրկել այն բոլոր հարցերը, որոնք շոշափվում են վերր նշված նամակներում: Բայց մեր խնդիրը որոշ շափով թեթևանում է շնորհիվ այն բանի, որ 1958 թվականին «Սովետական արվեստ» ամսագրի 3-րդ համարում լույս տեսավ «Կոմիտասի նորահայտ նամակները» վերտառությամբ մեր հողվածը, որի մեջ ընգարձակ քաղվածքներ են բերված Կոմիտասի՝ օրիորդ Մ. Բաբայանին գրած նամակներից: Բացի այդ, նույն 1958 թ. «Պատմա-բանասիրական հանդես»-ի № 1-ում լույս են տեսել մեր նախապատրաստած այն նամակները, որոնք գտնվեցին Ա. Չոպանյանի արխիվում: Այսպիսով, ընթերցողները հնարավորություն ստացան ծանոթանալու օր. Մ. Բաբայանին և Ա. Չոպանյանին Կոմիտասի գրած նամակներին: Այժմ մեր

խնդիրն է այդ նամակների հիման վրա առաջ բաշել մի բանի կարևոր հարցեր՝ կապված Կոմիտասի կյանքի, գործունեության և ստեղծագործության հետ։ Առաջինը՝ դա ժողովրդական երաժշտության նմուշների հավաքման, ուսումնասիրության, մշակման ու հրատարակման հարցն է։ Հայտնի է, որ ժողովրդական երգը եղել է Կոմիտասի գործունեության ղիխավոր առանցքը, այն ամուր պատվանդանը, որի վրա պիտի բարձրանար հայկական երաժշտության հոյակապ շենքերը։ Մտահոգված լինելով հայ երաժշտության ոճական անադարտությանը հասնելու խնդրով, Կոմիտասը տարիներ շարունակ անցել է դավաճից դավառ, գյուղից գյուղ, ձայնագրել է հայկական ժողովրդական երգեր, որոնց թիվը մի բանի հազարի էր հասել։ Այդ երգերի տարրերակներն իրար հետ համեմատելով, նա գտնում և առանձնացնում էր հատկապես նրանք, որոնք իրենց մեջ պահպանել էին հայ երաժշտության բնորոշ հատկանիշները։ Նա հենց այդ երգերն էր մշակում և ստեղծում նոր գործեր, իր խոսքերով ասած, բարդի գեղարվեստական միջոցներով բազմաձայնի վերածածա։ Հայ երաժշտական ստեղծագործության փրկությունը նա պայմանավորում էր ժողովրդական երգերի ոճական անադարտությամբ։ Այդ դժվար չէ եզրակացնել Կոմիտասի այն նամակից, որն ուղղված է Արշակ Զոպանյանին և գրված է միաժամանակ, 1904 թ. հունվարի 20-ին։ «Ի սեր մեր եկեղեցու և հայ գեղուկի երաժշտության պայծառության ոչ մի բանք մի խնայեք, Ձեր մեռքն եկածն արեք։ Գուր արդեն բաշ գիտեք, թե ինչպիսի մեծ փրկություն է կախված մեր եղանակներն անադարտ պահելուց և ժողովրդի ու իր եկեղեցու ազնիվ ու մաքուր սիրտը ճանաչելուց։ Դուք, իմ Փարիզ եղած ժամանակ, ամենից շատ էիք ոգևորված այդ գործի հաջողությունը փափագելով ի սրտե՛ս»¹։

Կոմիտասը ժողովրդական երգ հասկացողության տակ զնում էր միայն հայ գեղջուկի երգային ստեղծագործությունը։ Իր նամակներից մեկում, գրված 1906 թ. օգոստոսի 17-ին Բեռլինից, անդրադառնալով հայ ժողովրդական երաժշտության վերաբերյալ իր ուսումնասիրությանը, Կոմիտասը գրում է. «Աշխատության վերադիրը դիտմամբ ա՛յն գեղջուկ երաժշտություն» գրի, որովհետև բաղաբաշխը ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել, իսկ ժողովրդական բառը շատ ընդհանուր է և ընդգրկում է բոլորին, այնինչ այս երգերը հատկապես գեղջուկի ստեղծագործություններն են. իսկ աշխատության մեջ ժողովրդական բառը գործածել նմ, որովհետև զրագետներն ու կրթված զասակարգը սովորել է այդ անունը տալ, մանավանդ, երբ երգի հետն է միացած, գյուղական ժողովրդին»²։

Դժվար չէ նկատել, որ Կոմիտասն այս հարցում հասել է չափազանցության՝ ընդհանրապես միտելով բաղաբաշխ ժողովրդական երգի գոյությունը հայ իրականության մեջ։ Ընդու է, մեր ժողովրդական երաժշտության հիմնական ճյուղը հանդիսանում է գյուղական ժողովրդական երգը, բայց դրա կողքին դարձր շարունակ գոյություն է ունեցել և զարգացել է նաև բաղաբաշխ ժողովրդական երգն ու երաժշտությունը։ Ինքը Կոմիտասն էլ հետագայում ձայնագրել և մշակել է ինչպես բաղաբաշխ ժողովրդական, նույնպես և ազգային-հայրենասիրական բազմաթիվ երգեր։ Նվ եթե XIX դարում և XX դարի առաջին թուրրում ուշադրության կենտրոնում դրված է եղել գյուղական երգի հավա-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», Սրնան, 1958, № 1, էջ 248—249։
² Նույն տեղում, էջ 254։

քումն ու օգտագործումը կոմպոզիտորական ստեղծագործության մեջ և բաղա-
քային երգին նվիրվել է ավելի քիչ ուշադրություն, դա հետևանք է այն բանի,
որ դյուպական երգի ոճական անաղարտությունը կարևոր նշանակություն ունեւր
հայ կոմպոզիտորական ստեղծագործության հիմքերի ձևավորման համար:

Կոմիտասն անդրադարձել է նաև հայ հոգևոր երգերին: Բայց այստեղ էլ
նա ձգտել է ոճական անաղարտության՝ աշխատելով հոգևոր երգը մաքրել
ավելորդ պանդանքներից և օտարամուտ տարրերից: Իր նամակներից մեկում
(1903 թ. հունվարի 23), անդրադառնալով Պապա Համբարձումի՝ ձայնագրած
շարականներին, Կոմիտասն զրուշացնում է, որ չպետք է վատահել կրա դպրո-
ցին, ք...որովհետև տաճիկ եղանակներու վերա է ձեւել նա մեր շարականները: Եւ
կասկածում է դրանց ճշտության: Նա գրում է. «Ճշմարիտն ասեմ, ես կասկա-
ծում եմ. ավելի շուտ տաճիկ եղանակներ և այն էլ տաճիկ ոճով պետք է լսեք,
քան աղջային. ուստի խնդրեմ զգուշ չեղեք բնատրության մեջ, մանավանդ ծանր
եղանակների նկատմամբ, որքան կարելի է, խիստ եղեք, ամենից շատ, ծանե-
ւնն է խանգարվել»:

Այսպիսով, Կոմիտասը թե՛ զեղչուկ և թե՛ հոգևոր երաժշտության մեջ
ձգտել է ոճական անաղարտության, պահանջել է զգուշ և խստապահանջ լի-
նել հրատարակվող և օտար աղգերին ներկայացվող հայկական երգերի նկատ-
մամբ: Վերը մեջ բերված նամակի շարունակության մեջ Կոմիտասն ավելաց-
նում է. «Այսքան երկար ու բարակ զրելուս պատճառն էլ այն է, որ մեր թե՛
եկեղեցական և թե՛ ժողովրդական երգերը զեռ նոր են ելնում նվրդական բե-
մերի վրա, զեռ նոր ենք ծանոթացնում նոցա մեր զգացմունքի՝ վարքի-բարքի
ճշգրիտ պատկեր տվող աղջային երգերին, ուստի շատ զգուշ պետք է լինել
մի այսպիսի վնասվուկ խնդր շոշափելուց»:

Այս նույն զրուշավորությունը Կոմիտասն հանգես է բերել նաև ժողովրդա-
կան երգերի խոսքերն օտար լեզուներով թարգմանելու խնդրում: 1905 թ., երբ
Ֆրանսիացի երաժշտագետ Պիեր Սրբիի հանձնարարությամբ Կոմիտասն սկսեց
սպազրության նախապատրաստել 100 երգից բաղկացած հայ ժողովրդական
երգերի մի ժողովածու, կցելով բնագրձակ ուսումնասիրություն «Հայ զեղչուկ
երաժշտություն» վերտառությամբ, գիմելով թարգմանին՝ բանաստեղծ և գիտ-
նական Ա. Չոպանյանին, գրում է. «Լավ կլինե՞ր՝ թարգմանեիր ոչ թե երգի հար-
մարեցնելով, տաղաչափությամբ, այլ միայն արձակ, բովանդակություներ միայն
տալով, որովհետև կրկնակներն ու շատ կրճատ մտքեր արտահայ-
տելն անհնար է որեւ օտար լեզվով և նույնիսկ աննպատակ, քանի որ գիտական
նշանակություն միայն ունի»³: Նույն նամակի շարունակության մեջ Կոմիտասը
գրում է. «Եթե կուզեք Ձեր թարգմանությունը երգելու հարմարեցնել, այն ժա-
մանակ առաւերդովելու է, որ երգերի վանկերի լավը, թիվը, շեշտը, մանավանդ
կրկնակների իմաստը ճիշտ հայերենի պես լինեն. որովհետև աղ շատ դժվար
է, ուստի և ես մի բանի տող վերն ասացի, որ ավելի լավ կլինեիր, եթե թարգ-
մանվեր բոլորովին արձակ, տալով միայն ճիշտ իմաստը»⁴:

³ Խոսքը վերաբերում է Համբարձում Չերչյանին, որը նույնպես Պապա Համբարձում է կոչ-
վել: Չպետք է շփոթել Համբարձում Լիմոնջյանի հետ:

⁴ Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1958, № 1, էջ 248:

⁵ Նույն տեղում, էջ 250:

⁶ Նույն տեղում:

Կոմիտասի խոսքերից միանգամայն պարզ է, թե որքան մեծ նշանակություն էր տալիս նա երգերի իմաստի ճիշտ թարգմանությանը և թե որքան ճիշտ կերպով պատկերացնում այն գծավարությունները, որոնք կապված էին ժողովրդական երգերի խոսքերի թարգմանության հետ: Եվ իրոք, այսօր էլ, երբ Արվեստի ինստիտուտը ձեռնարկել է Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի հրատարակության իրագործմանը, դարձյալ ծառանում է միևնույն գծավարությունը: Ինստիտուտին այդպես էլ չհաջողվեց հաղթահարել այդ գծավարությունները և հասնել երգվող թարգմանության քիչ թե շատ գեղարվեստական աստիճանի:

Կոմիտասի նամակներն ուսումնասիրողներին շափաղանց հարուստ նյութեր են տալիս լրիվ կերպով պատկերելու այն պայմանները, որոնց մեջ ընթացել է Կոմիտասի գործունեությունն ինչպես էջմիածնի վանքում, այնպես էլ Պոլսում: Այս հարցի վրա մենք հանգամանորեն կանգ ենք առել մեր նախորդ հոդվածում: Այժմ, ձեռքի տակ ունենալով Ա. Չուպանյանին գրված նամակները, գտնում ենք նոր նյութեր ևս: Ամենակարևորն այստեղ այն է, որ Կոմիտասը, բացելով փակագծերը, տվել է այն մարդկանց անունները, որոնք հալածում էին իրեն ու իր ընկերներին և թույլ չէին տալիս ամբողջապես նվիրվելու ստեղծագործական-հետազոտական աշխատանքի: Եթե մինչև այժմ Կոմիտասի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրող ընկերները, նյութերի պակասի սլատճառով, ստիպված էին բավարարվել անորոշ արտահայտություններով և կամ անել ենթադրություններ, ապա այժմ բոլորը հանվանե հականե մեջտեղ են գալիս: Դրանք են՝ կաթողիկոս Խրիմյան Հայրիկի մահից հետո տեղապահ նշանակված արքեպիսկոպոս Սուրենյանը, Մեսրոպ վարդապետը (հետագայում եպիսկոպոս), որին Կոմիտասը կնքել էր «ուղտ» մականվամբ, Հուսիկ արքեպիսկոպոսը, որին Կոմիտասն անվանում է «Գող արբանյակ», ակնարկելով նրա կողմից հոգևոր գումարների յուրացման պատմությունը, ճեմարանի ուսուցիչ Սիրական Տիգրանյանը և ուրիշներ: Կոմիտասն իր նամակներում բաղձիցս անդրադառնալով դրանց շարագործություններին, դառնությամբ է արձանագրում, որ նրանք ամեն կերպ աշխատում են իրեն և իր ընկերներին «վարկաբեկել գզվելի ստախոսություններով, աշակերտներին հուղելով, անլսելի զրույարտություններ բարվելով»: Կոմիտասը գրում է, թե «շատ կարող է պատահել նույնիսկ, որ մի խումբ, և այն սովոր և կարող միաբաններ, չդիմանալով հալածանքների՝ հեռանան վանքից»: Եվ իրոք, տեղասլահի շուրջը համախմբված վերոհիշյալ մարդիկ, նույնիսկ նոր կաթողիկոսի՝ Իդմիրյանի նշանակումից հետո էլ շարունակելով իրենց հալածանքները, վերջիվերջո հասան իրենց նպատակին. Կոմիտասն ու իր ընկերներին մի քանիսր հեռացան էջմիածնի վանքից: Կոմիտասն այլևս չէր կարող տոկալ ու համբերել, որովհետև, ինչպես ինքն է ասում նույն նամակում, «...այս դժոխային մեքենայությունները սիրտս ու միտքս հանգիստ չեն թողնում, որ կարողանում ստեղծել»⁷:

Որքան դառնություն կա հետևյալ խոսքերի մեջ. «Լավ է այսքանով գոցեմ դիրս. սիրտս լցված է. եթե չամաչեմ լաց լինելու՝ ցավերս շատացել են: Տես աչքովդ, թե ինչպես մարդիկ ավերում, կործանում են պատիվ, անուն, եկեղեցի, սրբություն, ազգայնություն և ինչպես պործիք են դառնում շարի ձեռքին և

⁷ Նույն տեղում, էջ 258:

ապա մի լցվիր, մի լար, մի ողրա հորևնացու պես, իր իսկ ողրով. այժմ նույն պատկերն է մեր շուրջը և նորա ուրվականն է ողբում մեր անբուժելի ցավերը»⁸։

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի են Կոմիտասի այն խոսքերը, որոնք շարագրված էին 1909 թ. սեպտեմբերի 5-ին կաթողիկոս Իլմիրյանին ուղղված նրա դիմում-հրաժարականի մեջ, որը վաղուց հրապարակվել է մեր մամուլում և հայտնի է բոլորին։ Ահա այս պատճառների հետևանքով էր, որ նա հաճախ երկար ժամանակով հեռանում էր էջմիածնից, իսկ 1910 թվականից՝ փոխադրվում է Պոլիս, ձգտելով աղատվել կոշմարային վիճակից և դտնել իր գործունեության համար նպաստավոր հող։

Իր նամակներում Կոմիտասը հաճախ է անդրադառնում ստեղծագործական ու երաժշտագիտական հարցերին, տեղեկություններ է հաղորդում իր գործունեության վերաբերյալ։ Այսպես, օրինակ, 1908 թ. մայիսի 2-ին օր. Մ. Բաբայանին դրած նամակում կարդում ենք. «Մեծ քանակությամբ երգեր եմ դաշնակել երգի և նվագարանի համար։ Սկսել եմ ճայ քնարի միաձայն հրատարակությունը մեր դպրոցների և առանձին դրժածության համար փոքրիկ տետրակներով. յուրաքանչյուր տետրակ պարունակելու է միայն մի տասնյակ երգ. երեկ այս աշնան Ա տետրակը հրատարակեմ»⁹։ Կոմիտասի այս խոսքերը կարևոր են ոչ միայն նրանով, որ վկայում են նրա ստեղծագործական լարված աշխատանքի մասին, այլև նրանով, որ դրանց մեջ արտացոլված է Կոմիտասի հոգատարությունը սովորող աշակերտության նկատմամբ։ Կոմիտասը մտադիր էր՝ աշակերտական տարիներից սկսած դպրոցական պատանեկությանն ու երիտասարդությանը դաստիարակել ժողովրդական երաժշտության նմուշներով։ Դժբախտաբար, Կոմիտասի այս մտադրությունը չի իրագործվել, և նրա կազմած՝ միաձայն երգերի առաջին տետրը մնացել է ձեռագիր վիճակում։

Կոմիտասը նամակներում հաճախ անդրադարձել է նաև իր գիտահետազոտական աշխատանքներին։ Բացի «Ճայ զեղջուկ երաժշտություն» աշխատությունից, որի մասին հիշվեց վերևում և որը, դժբախտաբար, մնաց անավարտ, նա մի շարք նամակներում անդրադարձել է նաև հայկական խաղերի ուսումնասիրության հարցերին։ 1904 թ. դեկտեմբերի 30-ին Ա. Չոպանյանին դրած նամակում Կոմիտասը հաղորդում է. «Գործերս հաջող են. այժմ կգրադվեմ հայ հին խաղերու ուսումնասիրությանը և հուսով եմ շուտով կարող պիտի լինեմ զադտեիր բանալ և զեթ ցԺԳ դար եղանակներն ստուգել»¹⁰։ Հինգ տարի անց, 1909 թ. ապրիլի 15-ի նամակում նա արդեն զոհանակությամբ նշում է այդ ուղղությանը իր կատարած հետազոտական աշխատանքի արդյունքի մասին «Այս ձմեռվան աշխատանքներս խիստ արդյունավետ եղան. գտա հայոց հին խաղերի բանալին և սկսա կարգալ պարզ եղանակները։ Այս ամռան ուղում եմ մի քանի շարաթով նախքան հայրենիք գնալս անցնել Երուսաղեմ և մի քանի կարևոր ձեռագրեր ևս ուսումնասիրել, որ գործը շուտով առաջ տանեմ»¹¹։

Ինչպես տեսնում ենք, Կոմիտասը թեև հասել էր զրական արդյունքի և կարողանում էր կարգալ խաղադրված պարզ գրվածքները. բայց չէր շտապում իր քրտնաջան աշխատանքի արդյունքները հապճեպ կերպով հրապարակել։ Նա

⁸ Նույն տեղում, էջ 259։

⁹ Հայկական ՍՍՀ կուլտուրայի միեխտությունների գրականության և արվեստի թանգարան, երաժշտության բաժին, Մ. Բաբայանի ֆոնդ։

¹⁰ «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1958, № 1, էջ 250։

¹¹ Նույն տեղում, էջ 259։

նորից ու նորից էր ուղում սաուդել իր գտածը, ուսումնասիրել նոր ձևազրեք և ապա միայն ներկայացնել հասարակությանը: Այս մասին նա իր խոսքն ասել էր նաև մամուլին: Հիշենք նրա նամակը «Տաճար» կիսամյա հանդեսի խմբագրությանը, տպադրված 1910 թ. 4, Պոլսում (N 10, էջ 311):

Իր նամակներում Կոմիտասը հաճախ է անդրադառնում Պոլսում հայկական երաժշտական դպրոց հիմնելու և այդպիսով ազգային երաժշտական կադրերի պատրաստման գործը հաստատուն հիմքերի վրա գնելու հարցին: Նրա այս նախաձեռնությունը թեև հանգիպեց պոլսահայ հասարակության խանդավառ վերաբերմունքին, բայց և այնպես մնաց անկատար, որովհետև բացակայում էին անհրաժեշտ նյութական պայմանները: Կոմիտասը ստիպված եղավ սահմանափակվել իր հինգ սաների պատրաստմամբ, որպեսզի գոնև մասամբ կարողանա թեթևացնել իր բեռը և ապահովել դպրոցական աշակերտության երաժշտական դաստիարակության գործը: Այնքան անգամ, երբ նա հանդիպում էր արտակարգ երաժշտական ընդունակության տեր երիտասարդներին, որոնք նյութական միջոցների բացակայության և այլ հանգամանքների շնորհիվ զրկված էին իրենց ընդունակությունների դարգացնելու և մասնագիտական երաժշտական կրթության ձեռք բերելու հնարավորությունից, Կոմիտասը դառն կակիժով էր արձանագրում այդ զեպքերը: Նա կրկին ու կրկին համոզվում էր երաժշտական դպրոց հիմնելու անհրաժեշտության մեջ, իր մտքերն ու զգացմունքները հաճախ բաժանում էր սիրելի աշակերտուհու՝ օր. Մարգարիտ Բաբայանի հետ, որին նա համարում էր իր բացելիք ապագա դպրոցի դասատուներից մեկը. «Ժողովրդի մեջ համակրանքս շատ է,— գրում է Կոմիտասը օր. Մ. Բաբայանին,— բայց զեռ շարժվող չեն, ստրկությունը այնպես է ճղմել, որ ինքնուրույն ու վստահ գործի եռանդ չի մնացել մեռնեքին» (1912 թ. մայիսի 12)¹²: Իսկ երբ վերջնականապես համոզվեց, որ Կ. Պոլսում հայկական երաժշտական դպրոց ստեղծելու ծրագիրն անիրագործելի է, նա իրեն զիմող ընդունակ պատանիներին ուղարկում էր Փարիզ, օր. Մ. Բաբայանի մոտ և կամ խեղրում նրա աջակցությունն այս կամ այն երիտասարդի ուսման գործը կազմակերպելու հարցում:

Կոմիտասը իր նամակներում հաճախ է անդրադառնում իր թղթակիցներին՝ օր. Մ. Բաբայանի և Ա. Զոպանյանի գործունեության գնահատմանը և ցավով է արձանագրում, որ օտարներն ավելի են հասկանում ու գնահատում նրանց գործը, քան հարազատ ժողովուրդը: Միաժամանակ նա հետո է ժողովրդին մեղադրելու մտքից և շտապում է ավելացնել, «Բայց մեր ժողովուրդն էլ մեղավոր չէ. Գեղարվեստը դեռ ետը է ոտը դնում մեր կյանքի ասպարեզը, և հույս ունեմ, թե շուտով առաջ պիտի երթանք, դի ատաղձ շատ կա և ընդունակություն մը պետես են» (1912 թ. մայիսի 12)¹³:

Կոմիտասի նամակներում շոշափված են բազմաթիվ ու բազմազան հարցեր, այդ թվում նաև երաժշտական տերմինոլոգիայի ստեղծման, իր բազմաձայն պատարագի կատարման, հայ ժողովրդական ու հոգևոր երաժշտության վերաբերյալ համերգներ ու դասախոսություններ կազմակերպելու, ժողովրդին իր բնիկ երկրում ճանաչելու անհրաժեշտության և այլն: Սակայն առավել կարևորն այն է, որ այս նամակները նոր ու հետաքրքիր նյութեր են տալիս Կոմիտասի աշխարհայացքը, քաղաքական բմբռնումներն ու համոզումները բնութա-

¹² Գրականության և արվեստի թանգարան, երաժշտության բաժին, Մ. Բաբայանի ֆոնդ:
¹³ Նույն տեղում:

գրելու համար: Մինչև այժմ մեր երաժշտագիտությունը փաստական նյութի մեծ պակաս էր գգում այդ հարցերը պարզարանելու համար: Մեզ հայտնի էր, թե որքան սերտորեն էր կապված Կոմիտասը հարադատ ժողովրդի հետ, ինչպես էր նա ապրում նրա ուրախությունը ու տխրում նրա տխրությամբ: Հայտնի էր, որ Կոմիտասն իր ստեղծագործության մեջ արտացոլել է հարադատ ժողովրդի ապրած դարավոր ողբերգությունը («Անտունի», «Կոունկ» և այլն): Գիտենք նաև, թե ինչպես էր նա վերապրում սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի կողմից հայերի դեմ կազմակերպած հալածանքներն ու կոտորածները, բայց չգիտենք, թե ի՞նչ էլք էր տեսնում այդ գրությունից, ինչպես էր նա վերաբերում հայ իրականության մեջ գոյություն ունեցող քաղաքական հոսանքներին և հատկապես ազգային-ազատագրական շարժմանը: Այս հարցերի բավարար պատասխանը մենք գտնում ենք Ա. Չուպանյանին գրած նամակներում: Արդ, ի՞նչ վերաբերմունք ուներ Կոմիտասը դաշնակցության նկատմամբ:

1909 թ. ապրիլի 15-ի նամակում Կոմիտասը մեզ հետաքրքրող հարցի մասին գրում է. «Տնտեսությունը վճռել է ինչ էլ որ լինի, ընդել դաշնակցություն կողմից հաստատությունը և տասնյակներով բռնում են արդեն ամեն գյուղում. այժմ այստեղ են, մի քանիսին տարել են բերդ, դեռ մի 60—70 հոգու բռնելու են, այսպես և մյուս գյուղերումն են վարվում: Ժողովուրդը կարծես ուրախ է, որ մի անկոչ հարկահանի ձեռքից ու կամայականություններից ազատվում է. ու մի ցավ, ոչ մի վիշտ չէ արտահայտում այս աղբիվ»¹⁴:

Նույն 1909 թ. հուլիսի 14-ին գրած մի այլ նամակում Կոմիտասը նկատում է. «Դաշնակցական խմբակը, որ ատամները թափած է, խիստ դժգոհ է վեհից (Իզմիրլյանից), բայց չեն համարձակվում հրապարակել նկելու էլ բավ է, որքան քանդեցին մեր ներքին և արտաքին կյանքը՝ անմիտ հպարտությամբ և փուշ ուժով: Մի բան մեզ խիստ ուրախացնում է, որ մեր հայերը Տաճկաստանում արդեն լավ և շուտ մթնոնցին այդ կուսակցությունների կործանիչ և ավերիչ ուղղությունները և թոթափեցին կամ թոթափելու քանքեր են անում, որ մի ապիկար խնամակալություն չավելանա»¹⁵: Իսկ մի քանի ամիս անց, երբ իրադրությունն էջմիածնի վանքում դարձյալ փոխվում է և դաշնակցական խմբակն իր ձեռքն է վերցնում գործը, Կոմիտասը գրում է Չուպանյանին. «Մի-րևի բարեկամս, այժմ արդեն պարզ է, որոշ չափով, որ մեր նոր վեհը ընկած է դաշնակցության ձեռքը: Սիրական Տիգրանյանը, որ «Հորիզոն» թերթի խմբագիրն էր, բերել տվին Ս. էջմիածին և տեղավորեցին ճեմարանի և առհասարակ բոլոր ազգային գույն ունեցող ժողովների մեղեմ այդ նպատակով, որ ճեմարանի և ուսուցչության միջոցով ետ սերունդ պատրաստե՛ հակակեղեցական ոգով տոգորված, ուսումնարանական հանձնաժողովի միջոցով գլորոցներն իր ձեռքը առնեն, տեղավորեն ուսուցիչներ, որոնք իրենց կուսակցության են պատկանում: Մի խոսքով լիակատար տիրում են վեհին»¹⁶: Նույն նամակի շարունակության մեջ Կոմիտասը բերում է կոնկրետ փաստեր իր ասածը հաստատելու համար. հին ուսուցչական խմբի արձակումը և նրա փոխարեն գեո ճեմարանը չավարտած ուսանողներին դասատու նշանակելը, Երվանդ վարդապետին պաշտոնից ազատելը՝ դաշնակցական աշակերտների բողոքի հիման վրա, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ազատումը և բազմաթիվ այլ փաստեր:

14 «Պատմա-բանասիրական հանգես», Երևան, 1958, N 1, էջ 258:

15 Նույն տեղում, էջ 260:

16 Նույն տեղում, էջ 261:

Այնուհետև եզրափակում է. «Ամեն բան կառավարում է կուսակցությունը հանձին Ուղտի և նրա արբանյակների: Ամեն բանի համար վեհը խորհրդակցում է նախ Մեսրոպի և Սիրական Տիգրանյանի հետ, որ կուսակցության կողմից նշանակված է վանքի և վեհի վրա իշխելու: Նորից կազմակերպել են սկսում դաշնակցական հին միջոցներով և ոչնչի չեն խնայում»¹⁷:

Կոմիտասի նամակներից քաղված այս խոսքերից միանգամայն պարզ է դառնում նրա բացասական վերաբերմունքը դաշնակցության նկատմամբ: Ժողովրդի հետ անբաղկատի կապերով կապված և նրա շահերով միայն ապրող արվեստագետը այլ վերաբերմունք չէր էլ կարող ունենալ: Անտարակույս է, որ Կոմիտասը լավ էր հասկացել դաշնակցության ավանտյուրիստական էությունը և նրան համարում էր չարիքի արմատներից մեկը:

Կոմիտասը լավ էր հասկացել, որ հայերի ազատագրման դործը երբեք պետք է կապել արևմտա-եվրոպական իմպերիալիստական պետությունների հետ, որոնք հալերի դիմումները շարունակաբար օգտագործել են սուլթանական Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և իրենց համար ձեռնտու գործարքներ կնքելու համար միայն: Թուրքիայից ազատություն սպասելն անմտություն է, դա նարավոր բան չէ: Հետևապես, միակ հույսը պետք է կապել Ռուսաստանի հետ: Եվ Կոմիտասը եզրակացնում է. «Ուրեմն չիք փրկություն արտաքո Ռասիո: Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ սլիտի բերե մեզ մեծ ազատությունը. շտապելով, առաջինը շառած երկրորդ քայլի դիմելով բոլորովին պիտի կորչենք»¹⁸:

Այսպես է մոտենում խնդրին Կոմիտասը և հանդում հետևյալ վերջնական եզրակացությունը. «Զպետք է բաժանվենք. չպետք է խաբվենք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն. միանալու ենք և զործնական ճամբան բռնելու: Ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես և բարոյապես, դուտ ազգային, ստանց օտարեն ու մեղ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք՝ իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն...»¹⁹:

Ահա այս է ազգային ազատագրության Կոմիտասյան ծրագիրը. ամբողջ հայությանը համախմբել Ռուսաստանի հովանավորության ներքո, տնտեսապես ու բարոյապես աճել ու զարգանալ և ապա ռուսական հեղափոխության օգնությամբ հասնել վերջնական ազատագրման:

«Ես վախ չունեմ,— ավելացնում է Կոմիտասը,— թե ռուս կառավարության մեջ կհալենք, որքան ալ որ հալենք այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվենք կվաստակենք. ես այս կարծիքն ունիմ»²⁰:

Կոմիտասի նամակներն, այսպիսով, նոր ու հարուստ նյութ են տալիս մեզ՝ նրա ամբողջական կերպարն ավելի բազմակողմանիորեն գծելու համար: Նամակների շնորհիվ Կոմիտասը հանդես է գալիս ոչ միայն որպես մեծ արվեստագետ ու գիտնական, այլև որպես մեծ քաղաքացի, որն ապրելով իր ժողովրդի անցյալով ու ներկայով, մտահոգված էր նաև ապագայով և երկար որոնումներից հետո գտել էր իր ժողովրդի ազատագրության ճիշտ ճանապարհը:

¹⁷ Նույն տեղում, էջ 262:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 264—265:

²⁰ Նույն տեղում: